

Հ. ԳՈՒԱՐԴ ԽԱՁՈՒԿՑԱՆ

ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍԱԲԼ

աղանատման վեպ

Երևան
Yerevan
2015



ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Խրատպարան
EDIT PRINT
Publishing House

ՀՅՂ 821.19-31 Խաչիկյան
ՊՄՂ 84(5Հ)-44
Խ 288

ԽԱՉԻԿՅԱՆ ԷՊՈՒԱՐԴ

Խ՝ 228 Սմբատ Գունդաստարի: Պատմավեպ: Էպոսարդ Խաչիկյան-եր.:
«Էդիտ Պրինտ» Հրատարակչություն 2015–376 էջ:

«Սմբատ Գունդաստարի» պատմավեպն ընդգրկում է Կիլիկիայի հզոր թագավորներից մեկի՝ Հեթում Առաջինի և նրա իմաստասեր, իրավագետ եղբոր՝ Սմբատ սպարապետի, գործունեության ժամանակաշրջանը, երբ դիվանագիտորեն դաշնակցելով մոնղոլների հետ, ոչ միայն կարողացան ամրապնդել թշնամիներին՝ սելջուկ-թուրքերին, լատինական պետություններին, ափսիս ուղ՝ եգիպտական մամլուքներին, այլև ընդարձակեցին երկրի սահմանները:

ՀՅՂ 821.19-31 Խաչիկյան
ՊՄՂ 84(5Հ)-44

ISBN 978-9939-75-010-1

© Խաչիկյան է.
© Էդիտ Պրինտ

Առաջին մաս



Պատուհը ոչ միայն սպրիտային, բուստամուկյունն է:

Արարչագործության հրաշքից և ապա՝ հետջրհեղեղ-
յան խառնակ ժամանակաշրջանից հետո, երբ Արա-
րատի կատարին իջևանած մարդկության փրկված բեկորները
սպրիտ ու հույս ստացան, կյանքը սկսեց զարգանալ հա-
կադրությունների՝ բարու և չարի, լույսի ու խավարի, մեղքի
և ապաշխարության, անգամ՝ ծննդյան ու մահվան միջոցով,
քանզի մեկով էր պայմանավորված մյուսի գոյը, և, իրար բա-
ցասելով, ներդաշնակության պատրանք ստեղծեցին: Ինքն էլ՝
ժամանակի շնչին ու ճակատագրին հյուս, ձեռնոց չնետեց նա-
խախնամության դեմքին, քանզի դիտեր, որ իր ճամփան խո-
տոր է անցնելու՝ սրի ու գրչի, պատերազմը սիրողի ու սպա-
նությունն ատողի, քաղաքներ ավերողի և գեղեցիկը պաշտո-
ղի համաձույլ կաղապարում...

Սմբատ Գունդատարը խոժոռ հայացքը կտրեց ճամփոր-
դական գրակալին գրված պիտույքներից՝ սկիհում խնամքով
չարված եղեգնյա գրիչներից ու արծաթե մեկանամանից.

– Մուշեղ–

Հայտնվեց թիկնեղ, գինավառ համհարզը.

– Գունդստա՞ր¹:

– Գինի բեր:

Ցարուցրիվ էր մատենագրու՞մ ժամանակաշրջանը ընտրո՞վի որոշելով: Մտածու՞մ էր՝ կհասցնի համակարգել: Անեովեց մազաղաթին ու հիշեց, թե նախորդ անգամ որտեղ էր կանգնել՝ Լևոն Մեծագործի մասնակցությունն էր խաչակրաց երրորդ արշավանքին. հազար հարյուր ութսուներեք թվահանն էր: Երուսաղեմյան արշավին մասնակցու՞մ էին Յրանսիայի միապետ Փիլիպոս Ավղուստը, Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը և Գերմանիայի յոթանասունամյա կայսր Ֆրեդրիկ Շիկամորուսը: Իսկ Կիլիկիայի Մեծ իշխանը դաշնակցեց խաչակիրներին՝ ընդդեմ Այուբյան սուլթան Սալահզեդդինի, քանի որ Գերմանիայի կայսրը ասպետներին աջակցելու համար Լևոնին խոստացել էր և՛ թագ, և՛ միջագային ճանաչում, սակայն հեղձուկ, հուլիսյան մի կեսօր, Սելեկիայի մոտով անցնող Կալիկազնոս գետու՞մ լողանալիս, ծերուկը հանկարծամահ եղավ...

Վերստին մտավ Մուշեղը, կու՞մն ու պավաթը գրեց սեղանին, բայց չգիտես թե ինչու ոտքը կախ զցեց:

– Ի՞նչ կա:

Սպան թեթևակի ժպտաց.

– Ամբողջ օրը, պարոն, նժույգավարել էս, գուցե մի փոքր պառկեի՞ր:

– Շուտով կավարտեմ...

Երբ կրկին մենակ մնաց, կրկին բեռովեց մազաղաթին.

¹ Գունդստարը – Կիլիկիայու՞մ սպարապետի պաշտոն: Մաղու՞մ է լատիներեն comes stabluni բառից, որից հետագայու՞մ կազմվել են անգլիական constable և գալիական connetable բառերը: Նախկինու՞մ նշանակել է արքունի սխոտապետ, որն ավելի ուշ ձևաբ է բերել գորտափրի իմաստ:

«Նմանվել եմ խաչուղիներում տրեխներ մաշող գերվիշ-
բարայի, որը ողջ կյանքը փնտրել, բայց այդպես էլ չի գտել
ճշմարտության բանային: Չէ՛, իմացության ճամփան վերջ
չունի: Երբ թվում է, թե մոտեցել ես եզրագծին, հարկ է ամեն
ինչ նորից սկսել...»:

Եվ ավելի մռայլվեց. նմանվել է այն իմաստասերներին,
որոնք անմիջական կապ են տեսնում հնի և ներկայի միջև,
հավատում, որ անցյալի իմացությունը կարող է կամրջել
ներկա ու գալիք սերունդներին, զերծ պահել նախնիների կա-
տարած սխալներից: Որքան էլ առասպելականացվի պատու-
մը, մեկ է՝ ճշմարտության հատիկն առկա է, թեև երբեմն
հարկ է լինում մերժվածն իմաստավորել: Ամեն ճշմարտու-
թյուն երկու ծայր ունի, և առնվազն մանկամտություն է կար-
ծել, թե կարելի է գտնել բացարձակը. ո՛չ սպիտակն է անա-
ղարտ սպիտակ, ո՛չ էլ սևը՝ սեփ-սև. երկուսն էլ աչքի համար
անտես երանյաներ ունեն:

Հայացքը մագաղաթին էր, երբ վերագտավ հուշի թիվը:

... Երուսաղեմի վրա հարձակումից հետո Լեոնը ոչ միայն օգ-
նեց Ռիչարդին բյուզանդացիներից գրավել Կիպրոսը, այլև ան-
ձամբ ղլխավորեց հայկական նավատորմը: Այնուհետ հեռատեսու-
րեն ասպետներին մի շարք ընծաներ շուայեց. «տաճարականնե-
րին»¹ տվեց Ամուղա բերդաբաղաբը և զբան հարակից մի շարք
ամրոցներ, «հիվանդանոցայիններին»²՝ Կամարդխաս և Սելեկիա
քաղաքները:

¹ «Տամալիներ» կամ «տաճարական» ասպետներ. – Օրդներ «տաճարա-
կան» էր կոչվում, քանզի Հեռակայանը գտնվում էր Երուսաղեմի Սողոմոնի տաճա-
րի տեղում: Միաբնակցության անդամներն աչքի էին ընկնում ընչաբաղյուցյամբ և
անբարո վաքեով: Հետագայում տեղափոխվեցին Փարիզ, ու ք Ֆելիպ IV-րդն օրդե-
նի բոլոր գեկավարներին խորաչկ քաղաքացիաց:

² «Հիվանդանոցային» ասպետներ. – օրդներ վերականգնավորվել էր բարե-
գործական եղբայրությունից, որը հոգում էր հիվանդ ու խտավորների կաբիքները:
Անունը ծագում է Երուսաղեմում հիմնված Սուրբ Հովհաննու հիվանդանոցից: